

Այս առումով առավել հետաքրքիր են երկու այլ՝ ավելի մեծ պարագրֆում ունեցող համեմատությունների օրինակներ. «...առ ժամայն դարձոյց զսիրտ խանին ի քաղցրութիւն, **որպէս Արքաշէս արքայի ի վերայ Մուրփքէի, և բարկութիւն ի վերայ Համանայ**» (էջ 234): Այս համեմատության իմաստը ինչպես հարկն է հասկանալու համար պետք է ծանոթ լինել աստվածաշնչյան «Եսթերայ գրքի» տասը գլուխներից առնվազն առաջին յոթին: Իսկ ահա հետևյալ օրինակում ամբողջ Ելից գիրքը պարագրֆված է մեկ նախադասության մեջ և օգտագործվել է իբրև համեմատություն. «Քանզի ո՛չ տան թոյլ Պարսիկքն ելանել յերկրէն իւրեանց, **որպէս եգիպտացիքն՝ զազգն Իսրայէլի**» (էջ 97):

Ներփակ բնույթի են նաև այն կիրառությունները, երբ Դավրիժեցին դիմում է ավետարանների՝ Հիսուս Քրիստոսի կողմից պատմվող առակներին ու զրույցներին: Այստեղ իբրև նշան-ցուցիչներ ծառայում են այդ առակների ու զրույցների վերնագրերը կամ վերնագրին մոտ հղումները: Բարսեղ վարդապետի դիմանկարը գծելիս, օրինակ, Դավրիժեցին ներբերում է այդպիսի մի հատված՝ նշելով. «Եւ որպէս Տէրն Քրիստոս **յառակս երեք նկանակին** ասաց...» (էջ 312, հղվել է՝ Ղուկաս, ԺԱ, 5–8): Կամ՝ այսպիսի օրինակ. «...ըստ տէրունական **առակին՝ որ վասն այրոյն և անիրաւ դատարորին** պատմէ...» (էջ 185, Ղուկաս, ԺԸ, 2–4):

Այստեսակ կիրառություններում Դավրիժեցին երբեմն դիմում է ինտերտեքստի թաքնված կերպին, երբ այն ճանաչելու համար իմացական համապատասխան պատրաստվածություն է հարկավոր: Բերվելիք օրինակում ինտերտեքստն իբրև համեմատության օբյեկտ է կիրառված: Այն ներփակում է «Չար ոգու վերադարձը» զրույցը, որ առկա է Մատթեոսի ավետարանի ԺԲ գլխի 43–45 համարներում՝ «Յորժամ այսն պիղծ ելանէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ: Յայնժամ ասէ. Դարձայց ի տունս իմ. ուստի ելի. և եկեալ գտանէ զնա պարապորդ, մաքրեալ և յարդարեալ: Յայնժամ երթայ՝ և առնու ընդ իւր